



COVID-19-ի դեմ պատվաստում. հաճախակի տրվող հարցեր ԽԹԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԵՐ

Այս և պատվաստման վերաբերյալ այլ ՉՏՉ-ներն առցանց տեսնելու համար այցելեք [«COVID-19-ի դեմ պատվաստման կայքէջ»](#):

Ինչո՞ւ են COVID-19-ի դեմ խթանիչ դեղաչափերը կարևոր

Խթանիչ դեղաչափերն օգտագործվում են տարբեր պատվաստանյութերի դեպքում՝ ապահովելու շարունակական պաշտպանվածություն ծանր հիվանդություններից:

[COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շարունակում են լավ գործել](#) մարդկանց ծանր հիվանդություններից պաշտպանելու հարցում: Սակայն ժամանակի ընթացքում այս պաշտպանության մակարդակը կարող է իջնել: COVID-19-ի խթանիչ պատվաստանյութ ստանալը կարևոր է, քանի որ այն ուժեղացնում է Ձեր անվարակունակությունը: Սա Ձեզ տալիս է ավելի լավ պաշտպանվածություն ծանր հիվանդանալուց, հիվանդանոց ընկնելուց և նույնիսկ մահանալուց:

Ստացեք խթանիչի այն դեղաչափը, որը Ձեզ խորհուրդ է տրվում (տե՛ս ներքևում):

Ի՞նչ է թարմացված խթանիչ դեղաչափը

Թարմացված խթանիչը հայտնի է նաև որպես «երկվալենտ» խթանիչ: Սա պատվաստանյութ է, որը թարմացվել է թիրախավորելու համար COVID-19-ի սկսնական տարբերակը և Օմիկրոն BA.4 և BA.5 ենթատեսակները:

Թարմացված խթանիչները կարող են օգնել վերականգնել պաշտպանվածությունը, որը ժամանակի ընթացքում թուլացել է: Դրանք կարող են նաև մեծացնել պաշտպանվածությունը նոր ենթատեսակներից:

Pfizer-ի և Moderna-ի բոլոր խթանիչ դեղաչափերը թարմացված (երկվալենտ) պատվաստանյութեր են: Pfizer-ի և Moderna-ի բնօրինակ (միավալենտ) խթանիչներն այլևս հասանելի չեն: Novavax-ի խթանիչը բնօրինակ (միավալենտ) պատվաստանյութ է:

Ո՞վ պետք է ստանա խթանիչ դեղաչափ

Թարմացված (երկվալենտ) խթանիչները խորհուրդ են տրվում 6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց, մեկ բացառությամբ: 6 ամսականից 4 տարեկան երեխաները, որոնք Pfizer պատվաստանյութով ստացել են հիմնական շարքի բոլոր դեղաչափերը, այս պահին իրավասուն չեն ստանալ խթանիչ դեղաչափ:

Խորհուրդ է տրվում մեկ խթանիչ դեղաչափ COVID-19-ի դեմ վերջին դեղաչափից (հիմնական շարքի վերջին կամ վերջին բնօրինակ (միավալենտ) խթանիչ) առնվազն 2 ամիս հետո: Նշանակություն չունի, թե նախկինում քանի բնօրինակ (միավալենտ) խթանիչ կամ պատվաստանյութ(եր)ի որ տեսակն եք ստացել:





COVID-19-ի դեմ պատվաստում. հաճախակի տրվող հարցեր ԽԹԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԵՐ

5 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք՝

- 5 տարեկան այն երեխաները, որոնք հիմնական շարքի պատվաստումներն անելիս ստացել են Moderna պատվաստանյութ, կարող են ստանալ կամ Pfizer-ի, կամ Moderna-ի թարմացված խթանիչ:
- 5 տարեկան այն երեխաները, որոնք հիմնական շարքի պատվաստումներն անելիս ստացել են Pfizer պատվաստանյութ, պետք է պատվաստվեն Pfizer-ի թարմացված խթանիչով:
- 6 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասները կարող են ստանալ կամ Pfizer-ի, կամ Moderna-ի թարմացված խթանիչ:

6 ամսականից 4 տարեկան երեխաներ՝

- Այն երեխաները, որոնք հիմնական շարքի պատվաստումներն անելիս ստացել են Moderna պատվաստանյութ, կարող են պատվաստվել Moderna -ի թարմացված խթանիչով:
- Այն երեխաները, որոնք հիմնական շարքի պատվաստումներն անելիս ստացել են Pfizer պատվաստանյութ, այս պահին իրավասու չեն ստանալ խթանիչ դեղաչափ: Նշում. տարիքային ասյ խմբի համար Pfizer-ի երկվալենտ (թարմացված) պատվաստանյութն ընդգրկված է որպես հիմնական շարքի 3-րդ դեղաչափ:

Խթանիչի այլընտանքային տարբերակներ 18 տարեկան և ավելի բարձր տարիքի որոշ մարդկանց համար

18 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդիկ կարող են ստանալ Novavax (միավալենտ) պատվաստանյութը որպես խթանիչ՝ առաջարկվող Moderna-ի և Pfizer-ի թարմացված խթանիչների փոխարեն, եթե նրանք բավարարում են հետևյալ բոլոր չափանիշները.

1. Նրանք չեն կարող կամ ցանկություն չունեն ստանալ թարմացված խթանիչ (օրինակ՝ եթե նրանք ունեն խիստ սուր ալերգիա իՌՆԹ՝ Moderna և Pfizer, պատվաստանյութերի նկատմամբ), և
2. Նրանք ամբողջությամբ ստացել են հիմնական շարքի պատվաստումները, և
3. Նրանք նախկինում երբեք չեն ստացել խթանիչ դեղաչափ:

Novavax պատվաստանյութի խթանիչը տրվում է հիմնական շարքի վերջին դեղաչափից առնվազն 6 ամիս հետո:

Իմանալու համար, թե երբ կարող եք Դուք (կամ Ձեր երեխան) ստանալ խթանիչ՝ տե՛ս [«Երբ ստանալ խթանիչները»](#) ինտերակտիվ գործիքը CDC-ի՝ [«Ժամանակին ստացեք Ձեր պատվաստանյութերը, ներառյալ՝ խթանիչները»](#) կայքում:

Խոսեք Ձեր բժշկի հետ, եթե հարցեր ունեք:

Կարո՞ղ եմ ստանալ խթանիչ, եթե ունեցել եմ COVID-19

Այո: Դուք պետք է ստանաք խթանիչը, եթե նախկինում վարակված եք եղել COVID-19-ով: Խորհուրդ է տրվում, որ Դուք ժամանակին ստանաք COVID-19-ի դեմ պատվաստանյութի բոլոր դեղաչափերը, ներառյալ խթանիչները, նույնիսկ եթե արդեն ունեցել եք COVID-19: Պատճառն այն է, որ պատվաստանյութերն ավելացնում են պաշտպանվածությունը:





COVID-19-ի դեմ պատվաստում. հաճախակի տրվող հարցեր ԽԹԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԵՐ

Եթե Դուք վերջերս եք ունեցել COVID-19, Դուք կարող եք նկատի ունենալ հետաձգել պատվաստանյութի դեղաչափը ստանալը (հիմնական շարքի կամ խթանիչ) 3 ամսով՝ Ձեր ախտանիշների հայտնվելուց կամ առաջին դրական թեստ ունենալուց հետո (եթե ախտանիշներ չունեք): Հիվանդանալուց հետո առաջին մի քանի ամիսների ընթացքում՝ Նորից վարակվելու հավանականությունը ցածր է: Վարակվելու և պատվաստվելու միջև ընկած ավելի երկար ժամանակը կարող է նաև առաջացնել ավելի լավ իմունային արձագանք: Այնուամենայնիվ, Դուք չփետք է հետաձգեք դեղաչափի ընդունումը 3 ամսից ավելի, և ավելի ապահով է պատվաստանյութն ավելի շուտ ստանալը:

Եթե Դուք հիմա COVID-19 ունեք, պետք է սպասեք, մինչև առնվազն ավարտեք մեկուսացումը, որպեսզի ստանաք COVID-19-ի դեմ պատվաստանյութի դեղաչափը: Նպատակն այն է, որ Դուք չփոխանցեք COVID-19-ը առողջապահության աշխատակիցներին ու մյուսներին, երբ գնաք պատվաստվելու:

Որո՞նք են խթանիչ դեղաչափ ստանալու վտանգները

Խթանիչ դեղաչափերին հաջորդող հակազդեցությունները նման են հիմնական դեղաչափերին հաջորդող հակազդեցություններին: Կողմնակի ազդեցությունների մեծ մասը մեղմ և չափավոր են և տևում են 2 օր կամ ավելի քիչ: Ինչպես հիմնական պատվաստանյութերի շարքը ստանալու դեպքում, լուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են պատահում: Լրացուցիչ մանրամասների համար այցելեք CDC-ի՝ [«COVID-19-ի դեմ պատվաստման անվտանգությունը»](#) կայքէջ: Խթանիչ դեղաչափ ստանալու առավելությունները գերազանցում են բոլոր հայտնի և հնարավոր վտանգները:

Արդյո՞ք ես պետք է ներկայացնեմ բժշկի գրություն կամ դեղատոմս՝ խթանիչ դեղաչափ ստանալու համար

Ոչ, Ձեզ հարկավոր չէ բժշկի գրություն կամ դեղատոմս՝ խթանիչ դեղաչափ ստանալու համար: Երբ գնում եք պատվաստման վայր, Ձեզ հետ վերցրեք պատվաստման ապացույց, օրինակ՝ Ձեր CDC-ի սպիտակ քարտը կամ պատվաստման թվային քարտը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Հանրային Առողջության Վարչության [«Ինչպես պատվաստվել»](#) կայքէջ:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություններ



- Այս Հաճախակի տրվող հարցերը կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ հաճախակի տրվող հարցերը տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [«COVID-19 -ի դեմ պատվաստման ՀՏԳ-ները»](#) կայքէջ:
- CDC-ի կայքէջ՝ [«Ժամանակին ստացեք Ձեր պատվաստանյութերը, ներառյալ՝ խթանիչները»](#):
- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [«COVID-19-ի դեմ պատվաստման ժամանակցույցը»](#), որն աղյուսակներով ցույց է տալիս պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տրամադրում այն մասին, թե [ինչպես պատվաստվել](#):
- Հարցերի դեպքում խոսեք Ձեր բժշկի հետ: